ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---»----------2025թ. **N------ Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N41-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Երևանի քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N41-Ա որոշման N 2 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «Հասարակական կարգի պահպանության ծառայություն» գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

	Հասարակական կարգի պահպանության ծառայություն				
1	ծառայության պետ	1	697,000		697,000

2	ծառայության պետի տեղակալ	3	561,000		1,683,000
3	գործավար	1	248,200		248,200
-	**Տարածքային առաջին բաժին**				
4	բաժնի պետ	1	408,000		408,000
5	գլխավոր մասնագետ	4	306,000		1,224,000
6	առաջատար մասնագետ	5	292,400		1,462,000
7	առաջին կարգի մասնագետ	12	278,800		3,345,600
-	**Տարածքային երկրորդ բաժին**				
8	բաժնի պետ	1	408,000		408,000
9	գլխավոր մասնագետ	4	306,000		1,224,000
10	առաջատար մասնագետ	5	292,400		1,462,000
11	առաջին կարգի մասնագետ	12	278,800		3,345,600
-	**Տարածքային երրորդ բաժին**				
12	բաժնի պետ	1	408,000		408,000
13	գլխավոր մասնագետ	4	306,000		1,224,000
14	առաջատար մասնագետ	5	292,400		1,462,000
15	առաջին կարգի մասնագետ	12	278,800		3,345,600
-	**Տարածքային չորրորդ բաժին**				
16	բաժնի պետ	1	408,000		408,000
17	գլխավոր մասնագետ	4	306,000		1,224,000
18	առաջատար մասնագետ	6	292,400		1,754,400

19	առաջին կարգի մասնագետ	12	278,800		3,345,600
	ԸՆԴԱՄԵՆԸ	**94**			**28,679,000**

2) «Ընդամենը՝ առանձնացված ստորաբաժանումներ» տողում «1546» և «433,463,400» թվերը փոխարինել համապատասխանաբար «1570» և «440,154,600» թվերով:

3) «Ամբողջը» տողում «2371» և «709,115,045» թվերը փոխարինել «2395» և «715,806,245» թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 41-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 56-րդ հոդվածի (այսուհետ՝ Հոդված) 1-ին մասի՝ Երևանի քաղաքապետը հասարակական կարգի պահպանության բնագավառում հետևում է համակեցության կանոնների պահպանմանը, ավագանու հաստատած կանոնների պահանջների պահպանմանը, վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով սահմանված դեպքերում վարչական պատասխանատվության է ենթարկում զանցառուներին, միջոցառումներ է իրականացնում զանցանքների կանխարգելման, նվազեցման, կանխման և բացահայտման համար, իսկ Հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ 1-ին մասով սահմանված լիազորության իրականացման նպատակով քաղաքապետը ստեղծում է Երևանի հասարակական կարգի պահպանության համայնքային ծառայություն (այսուհետ՝ Ծառայություն), իսկ Օրենքի 60-րդ հոդվածի՝ Երևանի քաղաքապետը առևտրի և սպասարկման բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

1) օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում հսկողություն է իրականացնում առևտրի, հանրային սննդի, կենցաղային և սահմանափակման ենթակա ծառայությունների ոլորտում.

2) ավագանու սահմանած կարգով և չափորոշիչներին համապատասխան՝ դիմումի հիման վրա առևտրի և սպասարկման ոլորտի կազմակերպություններին շնորհում է որակի աստիճաններ.

3) Երևան քաղաքի տարածքում տալիս է «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 15.2-րդ հոդվածով սահմանված սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների գործունեության թույլտվություն.

4) Երևան քաղաքի տարածքում տալիս է հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց՝ տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային (մայիսի 1-ից հոկտեմբերի 31-ը ներառյալ) և ձմեռային (նոյեմբերի 1-ից ապրիլի 30-ը ներառյալ) սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման թույլտվություններ.

5) ոչ սահմանված տեղերում կամ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ առևտուր իրականացնելու կամ ծառայություններ մատուցելու կամ առանց համապատասխան թույլտվության իրականացված բացօթյա առևտրի կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պահանջների կամ պայմանների խախտմամբ շրջածախ առևտրի իրականացման դեպքում կիրառվում է առևտրի իրականացման և ծառայությունների մատուցման առարկաների առգրավում: Քաղաքապետի որոշմամբ սույն մասով սահմանված առգրավելու իրավասությունը կարող է վերապահվել աշխատակազմի համապատասխան պաշտոնատար անձին:

Համաձայն վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 219[1]-րդ հոդվածի տեղական ինքնակառավարման մարմինները քննում են Օրենսգրքի 43.1-ին հոդվածի 2.1-8-րդ (3-րդ, 4-րդ և 7-րդ մասերով նախատեսված իրավախախտումները տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հայտնաբերվելու դեպքում՝ տեղեկացնելով Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը) և 10-12-րդ մասերով, 48-րդ հոդվածով՝ իրենց տնօրինության տակ գտնվող հողերի մասով, 113-րդ, 124.7-րդ հոդվածով, 152.1-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերով, 152.2-րդ հոդվածի 1-ին մասով, 156-րդ, 157-րդ հոդվածի 2-րդ մասով, 157.15-րդ, 158-րդ (բացառությամբ 2-րդ, 3-րդ, 12-րդ, 17-րդ, 19-րդ, 23-րդ, 26-րդ, 29-րդ, 30-րդ և 35-րդ մասերի), 158.2-րդ, 162-

րդ, 162.3-րդ, 169.14-րդ հոդվածի 4-րդ մասով, 180-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերով, 169.16-րդ, 189.11-րդ , 189.12-րդ և 189.18-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը, ինչպես նաև 170.3 հոդվածով նախատեսված տեղական հարկերը և տեղական վճարները (բացառությամբ տեղական տուրքի) սահմանված ժամկետներում չվճարելու վերաբերյալ գործերը, իսկ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց իրավասության սահմաններում քննում են նաև Օրենսգրքի 114-րդ, 137.9-րդ, 154-րդ, 154.1-րդ, 156.1-րդ, 169.1-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Ծառայությունն իր իրավասության սահմաններում, ամենօրյա հսկողական և վերահսկողական գործառույթներ է իրականացնում՝ այդ թվում հերթապահություններ, ինչպես նաև գիշերային այցելություններ Երևան քաղաքի վարչական տարածքում առևտրի և ծառայությունների, քաղաքաշինության, կոմունալ տնտեսության, տրանսպորտի և այլ ոլորտներում օրենսդրությամբ, այդ թվում Երևան քաղաքի ավագանու որոշումներով սահմանված պահանջների կատարումն ապահովելու նպատակով:

2024 թվականի ընթացքում Երևան քաղաքում հայտնաբերվել և կազմվել են մոտ 1600 վարչական իրավախախտման փաստերի վերաբերյալ արձանագրություններ, զանցանք թույլ տված անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու նպատակով, իսկ 2025 թվականի ընթացքում կազմվել են մոտ 5500 արձանագրություններ:

Հաշվի առնելով Օրենսգրքի 255-րդ հոդվածով սահմանված պահանջը բազմաթիվ վարչական իրավախախտման փաստերի վերաբերյալ արձանագրություններ կազմվել են ընթացիկ վարչարարությամբ, մասնավորապես՝ առանձին ծանուցագրեր ուղարկելով զանցանք թույլ տված ֆիզիկական կամ իրավաբանական անձանց: Նշված փաստաթղթաշրջանառության կազմակերպումը պահանջում է լրացուցիչ մարդկային ռեսուրսների ներգրավում՝ հաշվի առնելով,

արձանագրության կազմման գործընթացի առանձնահատկությունը, ծանուցագրերի նախապատրաստումը և ծրարավորումը, մուտքագրումը համապատասխան փաստաթղթաշրջանառության ծրագիր (Mullberry) և համապատասխան ելքագրումը նշված փաստաթղթերի փոստային ծառայության՝ իսկ առանձին դեպքերում նաև այլ գերատեսչությունների միջոցով:

Միաժամանակ՝ կազմակերպվող բազմաթիվ միջոցառումների արդյուքնում, մեծաթիվ քանակով վարչական իրավախախտման փաստերի կապակցությամբ համապատասխան արձանագրություններ չեն կազմվում՝ հաշվի առնելով, որ ներկայիս մարդկային ռեսուրսը չի բավարարում այն կանխելու և արձանագրելու համար՝ հիմք ընդունելով, որ Ծառայության աշխատակիցները արձանագրության կազմմանը տրամադրում են աշխատանքային օրվա մեծ մասը:

Երևան քաղաքի վարչական տարածքում՝ ոչ սահմանված տեղերում առևտրի իրականացման կամ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ ծառայություն մատուցելու համար հիմք հանդիսացող ապրանքատեսականու առգրավման գործընթացը նույնպես պահանջում է լրացուցիչ մարդկային ներուժի ներգրավում՝ հաշվի առնելով, որ առգրավման գործընթացի անմիջապես կազմակերպելուց հետո նույն հատվածում նույն օրը կրկին կազմակերպվում է կամ առևտրային գործունեություն կամ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ ծառայության մատուցում:

2024 թվականի ընթացքում առգրավվել են ավելի քան 10 տոննա տարբեր ապրանքատեսականի, իսկ 2025 թվականի ընթացքում մոտ 75 տոննա, իսկ առանձին դեպքերում առգրավման գործընթաց հնարավոր չի եղել կազմակերպել նույնպես հաշվի առնելով վերոհիշյալ մեջբերումը:

Համաձայն «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 11.1-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Գնումների մասին» օրենքի պահանջներին համապատասխան իրականացված գնման գործընթացի միջոցով ընտրված օպերատորի կամ 100 տոկոս համայնքային

մասնակցությամբ օպերատորի կողմից ներհամայնքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների ծառայության կազմակերպման տեղական վճարը սահմանում է տվյալ համայնքի ավագանին, 7-րդ կետի՝ համայնքի վարչական տարածքում ներհամայնքային կանոնավոր փոխադրումների միասնական ծառայության կազմակերպման տեղական վճարի գանձման (վճարման) նկատմամբ հսկողությունն իրականացնում են համայնքի ղեկավարի կողմից լիազորված համայնքի աշխատակազմի պաշտոնատար անձինք կամ 100 տոկոս համայնքային մասնակցությամբ օպերատորի աշխատակիցները, 10-րդ կետի՝ սույն հոդվածի 7-րդ մասով նախատեսված անձինք իրենց լիազորությունների իրականացման ընթացքում իրավունք ունեն տեղական վճարի վճարման միջոց չունեցող անձին շարժական տեսաձայնագրող կամ լուսանկարահանող տեխնիկական միջոցների օգտագործմամբ, այդ թվում՝ դիմապատկերով նույնականացնելու նպատակով բնակչության պետական ռեգիստրից ստանալու տեղեկատվություն և սույն մասում նշված անձանց կողմից նույնականացումից հրաժարվելու դեպքում դիմելու ոստիկանություն՝ սույն մասում նշված անձանց նույնականացնելուն կամ իրենց լիազորություններն իրականացնելուն աջակցելու, իսկ տեղում դրա անհնարինության դեպքում՝ այդ անձանց ոստիկանություն տեղափոխելու նպատակով, 9-րդ կետի՝ ուղևորները պարտավոր են տրանսպորտային միջոց մուտք գործելուց անմիջապես հետո, բայց ոչ ուշ, քան մեկ րոպեի ընթացքում վավերացնել (տրանսպորտային միջոցում տեղադրված համապատասխան սարքի միջոցով հաստատել տեղական վճարը վճարված լինելու կամ զրոյական դրույքաչափի կիրառմամբ կամ կիրառման արտոնությամբ փոխադրվելու իրավունք ստացած լինելու հանգամանքը) տեղական վճարի վճարման կրիչը (համապատասխան քարտը, թղթային կամ էլեկտրոնային կտրոնը և այլն) և մինչև ուղևորության ավարտն իրենց մոտ պահպանել վավերացված կրիչը և տեղական վճարի վճարման նկատմամբ հսկողություն իրականացնող անձանց պահանջի դեպքում տրամադրել այն տեղական վճարի վճարումը և վավերացում կատարված լինելու հանգամանքն ստուգելու նպատակով,

որը չներկայացնելու բացասական հետևանքները կրում է ուղևորը: Նշված հանգամանքը կարող է հիմք հանդիսանալ վերջինիս վարչական պատասխանատվության ենթարկելու համար:

Միաժամանակ՝ Երևան քաղաքապետի 2024 թվականի ապրիլի 10-ի հ.1393-Ա և 2025 թվականի հուլիսի 21-ի հ.2893-Ա որոշումների համաձայն ներհամայնքային տրանսպորտում հսկողության իրականացման լիազորությունը վերապահված է Ծառայությանը:

Համաձայն վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 137.9-րդ հոդվածի (այսուհետ՝ Հոդված)՝ ներհամայնքային կանոնավոր փոխադրում իրականացնող ավտոբուսների, տրոլեյբուսների կամ մետրոպոլիտենի ծառայություններից առանց սահմանված տեղական վճարը կամ միասնական ծառայության տեղական վճարը կամ փոխադրավարձը վճարելու կամ տրանսպորտային միջոցում առանց տեղական վճարի վճարման կրիչը վավերացում կատարելու օգտվելը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով, 2-րդ մասի՝ ներհամայնքային կանոնավոր փոխադրում իրականացնող ավտոբուսների, տրոլեյբուսների կամ մետրոպոլիտենի ծառայություններից օգտվելու տեղական վճարի կամ միասնական ծառայության տեղական վճարի արտոնության կիրառմամբ այլ անձի կողմից նշված ծառայություններից օգտվելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնհինգապատիկի չափով, 3-րդ մասի՝ ներհամայնքային կանոնավոր փոխադրում իրականացնող ավտոբուսների, տրոլեյբուսների կամ մետրոպոլիտենի ծառայությունների համար նախատեսված միասնական ծառայության տեղական վճարը որոշակի ժամանակահատվածում անսահմանափակ ուղևորությունների համար վճարված լինելու կամ տեղական վճարի զրոյական դրույքաչափի կիրառմամբ արտոնություն ստացած լինելու դեպքում ծառայությունից նույն ժամանակահատվածում

տրանսպորտային միջոցում առանց վավերացում կատարելու օգտվելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի եռապատիկի չափով:

Տեղեկացնում եմ նաև, որ 2025 թվականի օգոստոսի 19-ից սկսած Հոդվածի համաձայն վարչական պատասխանատվության են ենթարկվել թվով 1329 անձիք:

Երևան քաղաքի ավագանու կողմից ընդունված որոշումներով սահմանված պահանջների և Երևանի քաղաքապետին օրենսդրությամբ վերապահված լիազորությունների կատարումն ապահովելու նպատակով, ինչպես նաև հաշվի առնելով, որ ներհամայնքային տրանսպորտում օրենսդրությամբ սահմանված պահանջների նկատմամբ հսկողություն իրականացնելու համար Ծառայությանը հավելյալ հաստիքներ չեն տրամադրվել, անհրաժեշտ է կատարել համապատասխան փոփոխություն Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի հ.41-Ա որոշմամբ հաստատված Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակում՝ Ծառայության մեջ գործող թվով 4 տարածքային բաժիններից յուրաքանչյուրում ավելացնելով 6 միավոր առաջին կարգի մասնագետի հաստիք՝ ընդհանուր առաջին կարգի մասնագետի 24 հաստիքային միավոր:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ